

ՆՈՐ ԻՏԱԼԻԱ ¹⁾

Բայց միայն նիւթական անհրաժեշտութեան գիտակցութիւնը չէր, որ դրդում էր իտալացոց գէպ այդ ճանապարհը՝ Իտալական գրականութիւնը, նրանց ամբողջ հոգեկան կեանքը տանում էր գէպ այդ միութեան ճանապարհը: Գրականութիւնը ստացաւ միանգամայն ազգասիրական գոյն. առանձին սիրով նիւթ էին վերցնում Իտալիայի փառաւոր հին անցեալից. ցոյց էին առնում այն հոգեկան ոյժը, որ կար իտալական ժողովրդի մէջ: Ոչ միայն թատերագիրները, վիպասաններն ու բանաստեղծներն, այլ և հրապարակախօսները, պատմաբաններն ու քաղաքագէտները գիտակցում էին Իտալիայի միութեան անհրաժեշտութիւնը:

Քաղաքական գրողներից ամենից շատ նպաստել է այդ գաղափարի տարածուելուն Պիչենցո Ջիօրբերտին: 1843 թ. սահրատարակեց մի գիրք՝ «Իտալացիների քաղաքական և բարոյական առաջնութիւնը»: Զմեռտուելով Իտալիայի ներկայ դրութեան թշուառութիւններից ու աղքատութիւնից Ջիօրբերտին նրա փառաւոր անցեալի երեսներից քաղում էր մեծ ապագայի յոյսն ու ինքնավստահութիւնը: Քաղաքականապէս նա ցանկանում էր ստեղծել Իտալիայից մի դաշնակցութիւն, այսինքն՝ իտալական մանր պետութիւնների դաշնակցութիւն, որի մէջ մտնէր նաև Աւստրիան: Այդ դաշնակցութեան մէջ նախագահութիւնը տրւում էր պապին: Իտալացի մի ուրիշ յայտնի քաղաքական մտածող Ջեզարէ Բեքո նոյնպէս ցանկանում էր իտալական թագաւորների դաշնակցութիւն, բայց նախագահութիւնը վերապահում էր Պիեմօնտի Կարլօ Ալբերտ թագաւորին, իսկ աւստրիացիք բոլորովին չպէտք է մասնակցէին այդ ընդհանուր իտալական դաշնակցութեան մէջ: Այս երկու գրողներն էլ ցանկանում էին Իտալիայի համար միայն դաշնակցութիւն, ոչ թէ կատարեալ միութիւն, որովհետև տեսնում էին, թէ որքան խորը կերպով տարբերւում էին իրարից Իտալիայի զանազան

¹⁾ «Լումար» 1903 № 2.

մասերը. որքան քիչ նմանութիւն կար նէապօլիտանացոց և Պիեմօնտի բնակիչների մէջ, բայց նրանք ի նկատի չէին առնում, նախ, որ այդպիսի գաշնակցութիւնը հազիւ թէ այնքան ոյժ ունենար, որ կարողանար պաշտպանել տղզային անկախութիւնը և երկրորդ՝ որ Իտալիայի պետութիւններէց մեծ մասը առանձին համակրանքով չէր վերաբերում այդ միացման գաղափարին: Ուրիշները հասկանում էին այս բանը և ցանկանում էին ամբողջովին միացնել Իտալիան և կազմել կոմ միապետութիւն կամ հանրապետութիւն: Բայց սրանք չէին կարողանում սլարզել այդ գործն իրականացնելու միջոցները, որովհետեւ ապստամբութիւնների ապարդիւնութիւնը և գաղտնի ընկերութիւնների թուլութիւնն ապացուցուած էր շատ անյաջողութիւններով, որոնք ուղեկցւում էին անթիւ զոհերով: Իտալական պետութիւններն առանձին համակրանքով չէին վերաբերում զանազան մասերի մէջ տեղի ունեցող եռանդուն հաղորդակցութիւններին. բայց հաղորդակցութեան միջոցներն աւելանալու ամեն մի քայլը ընդունւում էր մեծ ազգասիրական ուրախութիւնով: Օրինակ. որքան ուրախանում էին Լիվօրնոյի (Տոսկանիայում) և Ջենովայի (Պիեմօնտում) մէջ բացուած նաւային հաղորդակցութեան համար: Աւելի մեծ նշանակութիւն ստացան Իտալիայի համար գիտական և արդիւնաբերական ժողովները, որտեղ ծանօթանում էին նէապօլիտանացիք և պիեմօնտցիք, վենետիկցիք և հռոմայեցիք, որտեղ նրանք սովորում էին զգալ իրանց նախ և առաջ իտալացի լինելը: Այսպիսով միացման գաղափարը մեծ առաջադիմութիւն արւա իտալական հասարակութեան, մանաւանդ զարգացած իտալացիների մէջ: Բայց Իտալիան գլխաւորապէս երկրագործական երկիր էր: Ժողովրդի մեծ մասն ապրում էր քաղաքներից հեռու, իրարից անջատուած, նոյն իսկ բաժանուած բարբառներով, որոնք չափազանց շատ են Իտալիայում: Համարեա ամեն տեղ գիւղերում կաթոլիկ հոգևորականութիւնն ամենազօր էր, նրանց աչքում նոր գաղափարները թւում էին կասկածելի և նոյն իսկ ազատամտական:

Ինչ վերաբերում է տէրութիւններին, պէտք է նկատել, որ Իտալիայում երկու պետութիւն կար, որոնց շուրջը կարող էին համախմբուել իտալացիները. պապական նահանգները և Պիեմօնտը: Դուք տեսաք, որ Ջիօրետի և Բելլաօի ծրագիրներով գլխաւոր առաջնորդները հանդիսանում էին պապական

Նահանգներն ու Պիեմոնտը: Միւս բոլոր միապետները օտար-
 երկրացի էին և դիմանում էին շնորհիւ աւատրիական օժանդա-
 կութեան: Պապի դրութիւնը տարբերում էր սովորական թա-
 զաւորի դրութիւնից. նա բարձրագոյն առաջնորդ էր ամբողջ
 կաթոլիկ աշխարհի, նրա պատճառով ամեն տարի Հռոմ էին
 հաւաքւում հարիւր-հազարաւոր ուխտաւորներ, որոնց համար
 նա երկրիս վերայ Աստուծոյ կենդանի մարմնացումն էր, նա
 ժառանգ էր միջնադարեան հզօր պապերի, որոնց դէմ անզօր
 էին նոյն իսկ գերմանական հպարտ կայսրները: Բայց կաթոլի-
 կութեան գլուխ համարուած պապի և իտալական թագաւոր
 պապի մէջ մեծ տարբերութիւն կար: Պապական նահանգները
 Եւրոպայի ամենայն ընկած թագաւորութիւններից մէկն էր.
 երկմուտքը գտնւում էր քայքայուած դրութեան մէջ, ժողովրդի
 բարեկեցութեան և յառաջագիմութեան համար ոչ մի հոգս չէր
 տարւում: Եւ պապերը կախումն ունէին Ֆրանսիայից և Աւ-
 ստրիայից, եւրոպական այս երկու ուժեղ և կաթոլիկ պետու-
 թիւններից, որոնք միմեանց վերայ շատ կասկածանքով էին
 նայում: 1831 թ. աւատրիական զօրքերը, պապական նահանգ-
 ներում ճնշելով ապստամբութիւնը, գրաւեցին Բոլոնիան, այն
 ժամանակ Ֆրանսիացիք զօրք ուղարկեցին գրաւելու Անկոնիան,
 պապական նահանգների ամենագլխաւոր քաղաքը ադրիատի-
 քական ժողովի ափում: Պապական նահանգներում կարգերն
 այնքան վատ էին, որ օտար տէրութիւնները, մանաւանդ Ֆրան-
 սիան, շատ անգամ առաջարկել են պապին, թէ անհրաժեշտ է
 բարենորոգութիւններ մտցնել երկրում, բայց պապի տիրապե-
 տութեան ժամանակ անկարելի էր որ և է բարենորոգում մըտ-
 ցնել: Սակայն կարծես հասել էր ըստէն, երբ Զիոբերտիի հե-
 տեղոյնքը կարող էին յուսալ՝ թէ իրանց իղձերը կիրագոր-
 ծուեն: 1846 թուին պապը դարձաւ Իմօլան Պիոս IX անունով:
 Նրա բարութիւնն ու մեղմութիւնն ամենքին յայտնի էին. ա-
 սում էին, որ նա իբր թէ համակրում է իտալական շարժում-
 ներին: Պապն սկսեց իւր գործունէութիւնը նրանով, որ ազա-
 տութիւն շնորհեց բոլոր քաղաքական յանցաւորներին, հիմնեց
 պետական խորհուրդ (Consiglio di stato) գաւառների ներկայա-
 ցուցիչներից, նշանակեց առանձին յանձնաժողով, որը պէտք է
 մշակէր բարենորոգումների ծրագիրը: Առանձին մարդասիրու-
 թիւն ցոյց տուեց նա հրէաներին, որոնք նրա նախորդների օ-
 ղով ստիպուած էին ապրել կեղտոտ և իրար վերայ կուտակուած

Հռոմի Գեատո գարշահոտ քաղաքամասում: Ժողովուրդը ցնծում էր, ազմուկներով դիմաւորում էր նրան փողոցներում: Մինչև անգամ Մաձձինին, եկեղեցու այդ թշնամին, գրեց Պիոսին մի ոգևորուած նամակ, հրաւիրեց նրան իտալական շարժումների գլուխն անցնել և դրանով Իտալիայի յաւիտենական շնորհակալութիւնը վաստակել: Մետտերնիի սաստիկ վախեցած էր պապի քաղաքականութեան այդ անսպասելի փոփոխութիւնով և կամենում էր զօրքով գրաւել պապական նահանգների մի մասը: Այդ ժամանակ Պիեմոնտի Թագաւոր Կարլոս Ալբերտ II-ն առաջարկեց պապին իր զօրքը աւստրիացոց դէմ: Այս Թագաւորն առաջնակարգ տեղ է բռնում իտալական միութիւնը վերստեղծողների մէջ. անցեալ (1801) տարի երախտագէտ իտալիան Հռոմում արձան կանգնեցրեց նրա յիշատակին: Իւր երկտասարդ հասակում, երբ նա դեռ Թագաժառանգ էր, մասնակցում էր իտալական շարժումներին, որոնք ցնցեցին Պիեմոնտը 1815 թուականից յետոյ: Աւստրիացիք ճնշեցին այդ ապստամբութիւնները և ցանկանում էին՝ Թագաժառանգին պատժելու համար՝ զրկել նրան դահի իրաւունքից. բայց Ֆրանսիացիք պաշտպանեցին: Այդ ժամանակից սկսած Կարլոս Ալբերտը համոզուեց, որ Իտալիայի ամենամեծ թշնամին Աւստրիան է:

Նա դահ բարձրացաւ 1831 թուին: Դա բէակցիայի տարին էր: Իտալիայում ամեն տեղ դեռ նոր էին ճնշուել այն ապստամբութիւններն, որ առաջացրեց 1830 թուականի Ֆրանսիական յեղափոխութիւնը. ամեն տեղ կանգնած են աւստրիական զօրքերը: Եւ Կարլոս Ալբերտը գործում էր մեծ խստութեամբ: Նա տեսնում էր, որ գաղտնի ընկերութիւններն ու զինուորական ապստամբութիւնները միմիայն խանգարում և վնասում են Իտալիայի անկախութեան և ազատութեան գործին: Մարդիկ, որոնք չէին հասկանում նրա դրութեան դժուարութիւնը՝ մշտական երկիւղն Աւստրիայի կողմից, նախատում էին իբրև փոքրոգի և դաւաճան: Իայց Թագաւորը հաստատուն կերպով շարունակում էր իր վերանորոգութեան դանդաղ, բայց հիմնաւոր աշխատանքը: Այն երկիրը, որը չունէր ոչ մի ինքնավարութիւն, նա մտցնում էր այնտեղ ընտրողական խորհրդատու ժողովներ: Առանձին ուշք դարձրեց զօրքի վերայ. նրա համար պարզ էր, որ ապագայում Աւստրիայի հետ կռիւն անխուսափելի է: Նա լաւացրեց զօրքի զէնքերը, զինուորական պատրաստութիւններն և զօրքի թիւը հասցրեց 60 հազարի պատերազմի

ժամանակ, որը, բաւական պատկառելի ոյժ էր այն ժամանակուայ համար, եթէ ի նկատի առնենք նաև կայսրութեան փոքրութիւնը: Ձարմանալի է, թէ ինչպիսի հետևողականութիւնով էր Կարլոս Ալբերտը մացնում բարենորոգութիւններ իւր թագաւորութեան մէջ. նա համոզուած էր, որ միայն այդպիսի զգոյշ և դանդաղ գործունէութիւնն է ապահովացնում նրանց հաստատութիւնը: Նա հաւատում էր Իտալիայի աւելի լուսաւոր ապագային, միայն ամենամեծ առաքելութիւնը համարում էր համբերութիւնը, զուր չէր նա իրան համար նշանաբան ընտրելու «Նա սպասում եմ իմ աստղին» խօսքերը (*j'attends mon astre*): Իրան դրութիւնը Կարլոս Ալբերտ որոշում էր այս խօսքերով: Նա միշտ կանգնած եմ կարճօնաբերի (ածխագործների) որի և ճիգվիտների շօկօւադի մէջ (ճիգվիտներին մեղադրում էին բազմաթիւ թունաւորութիւնների համար. իտալացիք իրաւացի կերպով նկատում էին, որ նրանք թշնամի են իրանց ազգասիրական ձգտումներին):

1848 թուին Տուրինի խորհուրդը դիմեց թագաւորին մի խնդրագրով, որով խնդրում էր, մտցնել պետութեան մէջ այնպիսի ձև, ինչպէս Ֆրանսիայում, ուր օրէնք հրատարակելու իրաւունքը պատկանում է ժողովրդի ներկայացուցիչներին: Թագաւորն այս անգամ համաձայնուեց. նա տուաւ մի սահմանադրութիւն, որը հիմք դարձաւ այժմեան Իտալիայի պետական կազմակերպութեան:

Այն ինչ չորս կողմում ամէն ինչ պեկոծւում էր. Լօմբարդեան և Վենետիկը արդէն ապստամբուել էին Աւստրիայի դէմ. նոյնպէս ապստամբութիւն կար Նէպոլում: Աւստրիացիք, սկըզբում անպատրաստ գտնուելով, ստիպուած էին թողնել իտալական նահանգները: Հէնց այդ ժամանակ Աւստրիան գտնուում էր դժուար դրութեան մէջ. նրա դէմ ապստամբուել էին բօհեմացիք, մաջառները, նոյն իսկ մայրաքաղաքն էլ հանգիստ չէր: Կարլոս Ալբերտը կարծում էր, թէ իրան աստղը ծագել է, թէ հասել է յարմար բոպէն ոչնչացնելու աւստրիական լուծը: Նա յոյս էր դնում ֆրանսիացիների օգնութեան վերայ, որոնք թըշնամաբար էին նայում աւստրիացիների ազդեցութեան տարածուելուն: Եթէ իտալական բոլոր ուժերը միացած լինէին, գուցէ նրանց յաջողուէր աւստրիացոց հետ հաշիւները վերջացնել:

Դժբաղտաբար այդ վճռական վայրկեանին իտալացոց մէջ չկար անհրաժեշտ միութիւնը: Խանգարում էր նոյնպէս հանրա-

պետականների վէճը միապետականների հետ, որոնք ցանկանում էին միացնել Լոմբարդեան և Վենետիկը Պիեմոնտի հետ: Երբ սկսուեց պատերազմը, Միլանում ժողովրդական քուէարկութիւն եղաւ և ձայների մեծամասնութիւնով վճռուեց միանալ Պիեմոնտին, բայց ուրիշ տեղերում հանրապետականներն աւելի զօրեղ էին:

Մինչև այժմ պապը բարոյական պաշտպանութիւն էր ցոյց տալիս իտալացի ազգասէրներին, թէև ոչ այնքան եռանդուն: Բայց նրան շատ և շատ վախեցնում էր դէպքերի ընթացքի անասելի արագութիւնը: Իտալիայի միութեան գաղափարին նա սկսեց կասկածանքով նայել, մանաւանդ երբ տեսաւ Պիեմոնտի յաջողութիւնները: Այդ միացումը արդէօք վտանգ չի սպառնում նրա աշխարհական իրաւունքներին: Նորից ճիզվիտները գերակշռող ոյժ ձեռք բերին պապի արքունիքում: Պապն սկսեց կոչ անել իւր ստորադրեալներին օրինական հպատակութեան և բոլորովին ի նկատի չունէր կռուել Աւստրիայի դէմ: Կրկնապէս բորբոքուեցին և վերջապէս պապի մինիստր Բասսին ընկաւ մարդասպանների ձեռքով: Տեսնելով որ այլ ևս չի կարելի զիջումների սպասել, ծայրայեղ կուսակցութիւնը որոշեց, հակառակ պապի ցանկութեան, փոխել պետութեան ձևը: Պիոս IX, չունենալով բաւարար թուով զօրք, յայտարարեց, որ զիջանում է բռնակալութեան առաջ և փախաւ Նէապօլիտանական թագաւորութիւնը: Այնտեղից սպառնում էր բանադրել այն ամենքին, որոնք կմասնակցեն որևէ կերպով նոր պետական կազմին: Չափաւոր օւղղութիւն ունեցող մարդիկ անտարբեր մնացին: Հանրապետականները յաղթեցին, նրանք պապին յայտարարեցին զրկուած բոլոր իրաւունքներից և Հռոմում հաստատեցին հանրապետութիւն: Սրա հետ միասին նրանք դիմեցին ամբողջ Իտալիային և առաջարկեցին ուղարկել լիազօրներ Հռոմ, որպէս զի մշակեն միացման ծրագիրը:

Այսպիսով ստեղծուեց երկու կենդրոն Իտալիայի միութեան համար. Պիեմոնտի թագաւորութիւնը և Հռոմի հանրապետութիւնը: Սակայն վերջինիս կեանքը երկար չտևեց: Կաթոլիկները շատ զայրացած էին, որ պապից խլել էին աշխարհական իրաւունքները: Նրանց աչքում դա սրբապղծութիւն էր, յանցանք էր կրօնի դէմ: Կաթոլիկական եկեղեցին դաւանութիւն էր դարձրել, որ պապը, նրա ծայրագոյն գլուխը, միաժամանակ աշխարհական թագաւոր էլ է, որովհետև միայն այդ

դէպքում նա կարող է բոլորովին անկախ լինել: Թէև Ֆրանսիայում հաստատուած էր հասարակապետութիւն, որը՝ ինչպէս ասած է նորա կանոնադրութեան մէջ, չպէտք է խառնուէր օտար պետութիւնների ներքին գործերի մէջ: Սակայն կաթոլիկ Պապականութիւնը մեծ ոյժ էր այնտեղ. նա կարողացաւ յաջողեցնել Ֆրանսիական զօրքերն ուղարկելու Հռոմ, իորոնք կործանեցին Հռոմի հասարակապետութիւնը և վերահաստատեցին պապի իշխանութիւնը:

Իտալիայի հիւսիսումն էլ գործերն անյաջող ընթացք ստացան: Ֆրանսիացիք ոչ մի օգնութիւն չարին Պիեմօնտին, պարզուեց, որ նրանք բոլորովին չեն ցանկանում հարևան ունենալ միացեալ և ուժեղ Իտալիային: Իսկ Կարլոս Ալբերտը, մենակ նոյն իսկ Լօմբարդացիների և Վենետիկցիների օգնութեամբ չէր կարող կռուել աւստրիական զօրեղ բանակի հետ: Նաւաբայի պարտութիւնից յետոյ, նա ստիպուած էր դաշն կնքել և հրաժարուել զահից: Նրա որդին, Վիկտօր Էմմանուէլն ընդունեց այդ դաշնադրութեան ծանր պայմանները, համաձայնուեց վճարել տհաճին զինուորական տուգանքը: Աւստրիական նահանգներում դիմադրութիւնը շարունակուում էր: Առանձին հեքոսութիւնով կռուում էին վենետիկցիք, որտեղ կազմակերպուած էր ժամանակաւոր կառավարութիւն, որին գլուխ էր կանգնած Իանիէլ Մանինը: Մինչև այժմ էլ դժգոհութիւն պալատի մեծ դահլիճում պահուում է այն մարմարիոնէ տախտակը, որտեղ գրուած է այդ կառավարութեան վճիռը. «Դիմադրել մինչև վերջին թագն»: Աւստրիացիք ստիպուած էին սովատանջ անել վենետիկցոց և երբ պաշարը վերջացաւ և խօլերան սկըռեց կոտորել, քաղաքն անձնատուր եղաւ համեմատաբար մեղմ պայմաններով:

Այսպիսով իտալացոց բոլոր յոյսերն սւ երազներն օդը ցնդուեցին: Նորից Իտալիայում իշխեցին աւստրիացիք: Բոլոր զինվումներն, որ 1848 թուին արուած էր Նէպօլին, Հռոմին, Տոսկանային, Պարմին և Մօդենին, յետ վերցրին: Իտալացիք չունէին ոչ բաւականին նիւթական միջոցներ և ոչ էլ ներքին միութիւն, որ կարողանային Իտալիան ազատել: Թէև 1849 թուականը եղաւ շատ երազների գերեզման, բայց միաժամանակ նա դարձաւ և նոր չըջանի սկիզբը: Այդ չըջանը վերջացաւ ընդհանուր իտալական թագաւորութեան հիմնուելովը:

ՍԱՐ. Մ.

(Կը շարունակուի)